

Ընդունվել է՝ 2012 թվականի դեկտեմբերի 7-ին

Հանրամատչելի

Հրապարակվել է՝ 2012 թվականի դեկտեմբերի 17-ին

Գրեկո RC-III21E

## **Գնահատման երրորդ փուլ**

**Հայաստանի պարտավորությունների կատարման**

**վերաբերյալ զեկույց**

**«Մեղադրանքներ (ETS 173 և 191, GPC 2)»**

\* \* \*

**«Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն»**

Ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից դրա 58-րդ լիազումար նիստում

(Ստրասբուրգ, 2012 թվականի դեկտեմբերի 3-7)

ԳՐԵԿՈ-ի  
քարտուղարություն,  
Եվրոպայի խորհուրդ

F-67075 Ստրասբուրգ  
Cedex՝ +33 3 88 41 20 00  
Ֆաքս՝ +33 3 88 41 27 05

Մարդու իրավունքների և օրենքի  
զերակայության հարցերով գլխավոր  
տնօրինություն  
Տեղեկատվական հասարակության և  
հանցագործության դեմ պայքարի հարցերով  
տնօրինություն

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցում գնահատվում են Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները՝ ուղղված Հայաստանի մասին երրորդ փուլի գնահատման զեկույցում ներկայացված առաջարկությունների իրականացմանը (տե՛ս 2-րդ պարբերություն), որոնք ներառում են երկու տարբեր թեմաներ՝ մասնավորապես՝
  - **Թեմա I – Մեղադրանքներ.** «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի (ETS 173) 1ա և 1բ հոդվածները, 2-12-րդ, 15-17-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, դրա Լրացուցիչ արձանագրության (ETS 191) 1-6-րդ հոդվածները և 2-րդ ղեկավար սկզբունքը (կոռուպցիայի քրեականացում).
  - **Թեմա II – Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն.** Կուսակցությունների և նախընտրական քարոզչության ֆինանսավորման հարցում կոռուպցիայի դեմ ընդհանուր կանոնների վերաբերյալ առաջարկության (Rec(2003)4) 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13բ, 14-րդ և 16-րդ հոդվածները և, ավելի ընդհանուր իմաստով, 15-րդ ղեկավար սկզբունքը (կուսակցությունների և նախընտրական քարոզչության ֆինանսավորում):
2. Գնահատման երրորդ փուլի վերաբերյալ զեկույցը ԳՐԵԿՈ-ի կողմից ընդունվել է դրա 49-րդ լիազումար նիստում (Ստրասբուրգ, 2010 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 3) և հրապարակվել է 2011 թվականի ապրիլի 11-ին՝ Հայաստանի կողմից հավանություն ստանալուց հետո (Greco Eval III Rep (2010) 4E [Գրեկոյի գնահատման III զեկույց (2010)4E] : Թեմա I և թեմա II ):
3. Ինչպես պահանջվում է ԳՐԵԿՈ-ի ընթացակարգային կանոններով, Հայաստանի իշխանությունները ներկայացրել են առաջարկությունների իրականացմանն ուղղված միջոցների հետ կապված իրավիճակը նկարագրող զեկույց: Այդ զեկույցը ստացվել է 2012 թվականի մայիսի 31-ին և հիմք է ծառայել Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցի համար:
4. Պարտավորությունների կատարման առնչությամբ համազեկուցողներ նշանակելու համար ԳՐԵԿՈ-ի կողմից ընտրվել են Ռումինիան և Հունաստանը: Ռումինիայի կողմից նշանակված համազեկուցողը Անկա ՍՏՐՈՆԵՆ է, իսկ Հունաստանի կողմից համազեկուցող է նշանակվել Պանագիոտա ՎԱՏԻԿԱԼՈՈՒՆ: Պարտավորությունների

կատարման վերաբերյալ զեկույցի մշակման հարցում նրանց օժանդակել է ԳՐԵԿՈ-ի քարտուղարությունը:

5. Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցում գնահատվում է Գնահատման զեկույցում ներառված յուրաքանչյուր առանձին առաջարկության իրականացման գործընթացը, ինչպես նաև տրվում է տվյալ անդամի կողմից այդ առաջարկությունների կատարման մակարդակի ընդհանուր գնահատականը: Չկատարված (մասամբ կամ բոլորովին) ցանկացած առաջարկության իրականացումը կգնահատվի Պարտավորությունների կատարման վերաբերյալ սույն զեկույցի ընդունումից 18 ամիս հետո իշխանությունների կողմից ներկայացվող Իրավիճակը նկարագրող հետագա զեկույցի հիման վրա:

## II. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### Թեմա I. Մեղադրանքներ

6. Հարկ է նշել, որ ԳՐԵԿՈ-ն իր Գնահատման զեկույցում I թեմայի առնչությամբ Հայաստանին ներկայացրել է 8 առաջարկություն: Ստորև ներկայացվում են տեղեկություններ այդ առաջարկությունների կատարման մասին:

#### Առաջարկություն i.

7. *ԳՐԵԿՈ-ի կողմից առաջարկվել է Քրեական օրենսգրքի 200-րդ, 311-րդ և 3111-րդ հոդվածներում հստակորեն քրեականացնել կաշառք պահանջելը և կաշառքի առաջարկ կամ խոստում ընդունելը «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածներին համապատասխան (ETS 173):*
8. Հայաստանի իշխանությունները զեկույցում են, որ Ազգային ժողովը 2012 թվականի փետրվարի 9-ին ընդունել է օրենք (ուժի մեջ է մտել 2012 թվականի մարտին), որով փոփոխություններ են կատարվել Քրեական օրենսգրքում (այսուհետ՝ ՔՕ), մասնավորապես՝ պասիվ կաշառակերության վերաբերյալ 200-րդ, 311-րդ և 3111-րդ հոդվածներում՝ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածներին համապատասխանեցնելու համար: Այդ հանցագործության սահմանման շրջանակն ընդարձակվել է այնպես, որ դրանում ներառվեն «դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունքներ, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն պահանջելը կամ ստանալու խոստում կամ առաջարկ ընդունելը»:
9. ԳՐԵԿՈ-ն ողջունում է Հայաստանի իշխանությունների կողմից սույն առաջարկության

համաձայն ձեռնարկված օրենսդրական միջոցառումները և անհիմն առավելության առաջարկ կամ խոստում պահանջելու և ընդունելու տարրերի հստակ քրեականացումը:

10. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ i առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

**Առաջարկություններ ii և iii.**

11. *ԳՐԵԿՈ-ն առաջարկում է միջոցներ ձեռնարկել (ինչպես օրինակ՝ վերապատրաստում, շրջաբերականներ և այլն) (i) անհիմն առավելություն (ինչպես նաև անհիմն առավելություն պահանջելը և այդպիսի առաջարկ կամ խոստում ստանալը) առաջարկելը և խոստանալը որպես առանձին հանցանքներ դատապարտելու փաստը հստակեցնելու համար և (ii) կաշառակերության հանցանքները հիմնավորելու նպատակով օբյեկտիվ փաստական հանգամանքների օգտագործումը խրախուսելու համար (առաջարկություն ii) և*

*ԳՐԵԿՈ-ն առաջարկել է միջոցներ ձեռնարկել՝ հանրային հատվածի աշխատողների բոլոր կատեգորիաների՝ ներառյալ պաշտոնական որոշում կայացնելու լիազորություն չունեցող աշխատողների համար կաշառակերության քրեականացումը հստակեցնելու համար (առաջարկություն iii):*

12. Երկու առաջարկությունների առնչությամբ՝ իշխանությունները զեկուցում են, որ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի տնօրենը ստորագրել է հրաման, որով հաստատվել է 2012 թվականի առաջին կեսին իրականացված գործողությունների և միջոցառումների ցանկը: Դրանք ներառում են, օրինակ՝ այնպիսի թեմաներ ընդգրկող ուսումնական դասընթացներ, ինչպիսիք են՝ «անհիմն առավելություններ առաջարկելը, խոստանալը, պահանջելը կամ այդպիսի առաջարկներ կամ խոստումներ ընդունելը որպես առանձին հանցանքներ» և «հանրային հատվածի ծառայողներին կաշառք տալը որպես կոռուպցիոն հանցանք»: Վերջին դասընթացում հստակեցվել է, որ պաշտոնյաներ չհամարվող գրասենյակային աշխատողներին, քարտուղարներին, արխիվավարներին և հանրային այլ ծառայողներին կաշառք տալը նույնպես քրեականացվում է կոռուպցիոն հանցանքների ներքո: Այդ թեմաների շուրջ անցկացվել է նաև կլոր սեղան քննարկում, որին մասնակցել են Գլխավոր դատախազությունը, Արդարադատության նախարարությունը և Ոստիկանությունը: Ավելին, նույն թեմայի վերաբերյալ Ոստիկանության կրթահամալիրի կողմից մշակվել են ուղեցույցներ, և 100 օրինակ տարածվել է Գլխավոր դատախազության, Արդարադատության նախարարության և Ոստիկանության ներկայացուցիչների միջև: Ուղեցույցները Ոստիկանության քրեական իրավունքի

դասընթացում գործածվել են որպես ուսումնական նյութեր: Ավելին, Արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտի ուսումնական ծրագրով անցկացվում է Հայաստանի Հանրապետության քրեական իրավունքի մասին դասընթաց, որում ընդգրկված են նաև այդ խնդիրները, և որին մասնակցում են քաղաքացիական ծառայողներ, այդ թվում՝ դատական որոշումների կատարման հարցերով զբաղվող և քրեակատարողական համակարգում աշխատող՝ Արդարադատության նախարարության ներկայացուցիչները: Ձեկույցում նաև նշվում է, որ 2011 թվականի երկրորդ կեսին Դատական դպրոցում դատավորների համար նախատեսվել էր վերապատրաստման դասընթաց, որում ներառվել էին «Կոռուպցիայի կանխարգելման մասին» դասընթացներ, և դրանց մասնակցել էին առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորները: Եվ վերջապես, Դատախազության դպրոցը մշակել է մի շարք գործնական և գիտահետազոտական ուղեցույցներ՝ ներառյալ «Պաշտոնական հանցագործությունների հիմնական տեսակների քրեական և քրեաբանական վերլուծության» և «Փողերի լվացման դեմ պայքարի» մասին ուղեցույցը, ինչպես նաև «Կոռուպցիայի դեմ քաղաքականության ոլորտում պատասխան միջոցներ» կոչվող ուսումնասիրությունը, որը նաև մատչելի է առցանց<sup>1</sup>:

13. ԳԲԵԿՈ-ն հաշվի է առնում համապարփակ ծրագիրը, որով թերևս սկզբնական և աշխատանքային դասընթաց է անցկացվել ոստիկանության ծառայողների, դատախազների և դատավորների համար կոռուպցիայի և մասնավորապես կաշառակերության հանցանքների առանձին բնույթի, դրանց հիմնավորելու համար փաստական հատկանիշների օգտագործման և հանրային հատվածում աշխատողների, անկախ նրանց կարգավիճակից կամ պաշտոնից, կաշառակերության վերաբերյալ:

14. ԳԲԵԿՈ-ն եզրակացնում է, որ ii և iii առաջարկություններն իրականացվել են բավարար չափով:

#### **Առաջարկություն iv.**

15. *ԳԲԵԿՈ*-ն առաջարկել է փոփոխել Քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածը՝ սպահովելու համար, որ այն տարածվի ցանկացած պաշտոնում մասնավոր հատվածի ընկերություններ ղեկավարող կամ այդպիսի ընկերությունում աշխատող բոլոր կատեգորիաների անձանց վրա, ինչպես նախատեսված է «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի (ETS 173) 7-

<sup>1</sup> [www.genproc.am](http://www.genproc.am)

*րդ և 8-րդ հոդվածներով:*

16. Իշխանությունները նշում են, որ Քրեական օրենսգրքում կատարված վերանայումների համաձայն՝ 200-րդ հոդվածը վերաձևակերպվել է այնպես, որ անձինք, ովքեր իրականացնում են կարգադրիչ կամ այլ կառավարչական գործառույթներ «կամ մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ զբաղեցնում են ցանկացած այլ պաշտոն առևտրային կազմակերպություններում, ենթարկվում է քրեական պատասխանատվության տվյալ հանցագործությունը կատարելու համար»:
17. ԳՐԵԿՈ-ն հաշվի է առնում ՔՕ-ի 200-րդ հոդվածում կատարված սույն փոփոխությունը և «կարգավորող կամ այլ կառավարչական գործառույթներ» արտահայտությունը հանելու փաստը, որը առանց հիմնավորման նեղացնում էր դրա կիրառության ոլորտը: ԳՐԵԿՈ-ն ողջունում է նաև 200-րդ հոդվածի վերանայված տեքստը «կամ զբաղեցնում են ցանկացած այլ պաշտոն» արտահայտությամբ լրացնելու փաստը, որի արդյունքում սույն դրույթը համապատասխանեցվել է Կոնվենցիայի 7-րդ և 8-րդ հոդվածներին:
18. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ iv առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

**Առաջարկություն v.**

19. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է քննարկել ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելը քրեականացնելու հարցը՝ սպահովելով «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի (ETS 173) 12-րդ հոդվածի բոլոր պահանջներին համապատասխանեցումը՝ այդպիսով չեղյալ համարելով Կոնվենցիայի սույն հոդվածին առնչվող վերապահումը կամ չերկարաձգելով դրա գործողության ժամկետը:*
20. Հայաստանի իշխանությունները նշում են, որ վերը նշված փոփոխությամբ Քրեական օրենսգիրքը լրացվել է ազդեցությունը<sup>2</sup> շահադիտական նպատակներով օգտագործելու ակտիվ կողմի վերաբերյալ նոր 312.2 հոդվածով, և հետևաբար Քրեական իրավունքի կոնվենցիայի 12-րդ հոդվածին առնչվող վերապահումը չեղյալ է համարվել 2012 թվականի հոկտեմբերի 8-ին: Իշխանությունները հիշեցնում են, որ այդ հանցանքի

<sup>2</sup> Շոդված 312: Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը

1. Անձին՝ նրա իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը, այսինքն՝ անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խտստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը իր կամ իր ներկայացրած անձանց օգտին որևէ պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպատակով կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողովության համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուսարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Ապօրինի վարձատրություն տալը, որը կատարվել է խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

3. Ապօրինի վարձատրություն տալը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Ապօրինի վարձատրություն ավող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել ապօրինի վարձատրություն տալու շտրթում, կամ եթե այդ անձը ապօրինի վարձատրություն տալու մասին ոչ ուշ, քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին:

պասիվ կողմն արդեն կարգավորվում է ՔՕ-ի 311-րդ, 311<sup>1</sup>-րդ և 311<sup>2</sup>-րդ հոդվածներով: Վերջին հոդվածում կատարվել են նաև այնպիսի փոփոխություններ, որ դրանում ներառվեն «դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունքներ, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն պահանջելը կամ ստանալու խոստում կամ առաջարկ ընդունելը»:

21. ԳՐԵԿՈ-ն գոհունակությամբ նշում է, որ առաջարկությունը քննարկելուց բացի, միջոցներ են ձեռնարկվել նաև ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելը քրեականացնելու և Կոնվենցիայի 12-րդ հոդվածին առնչվող համապատասխան վերապահումը չեղյալ համարելու ուղղությամբ: Անդրադառնալով ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելու վերաբերյալ դրույթների էությանը՝ ԳՐԵԿՈ-ն համաձայնում է, որ ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելու հանցանքի ակտիվ կողմը քրեականացվել է ՔՕ-ի 312<sup>2</sup> հոդվածով՝ 12-րդ հոդվածի բոլոր հատկանիշներին համապատասխան: Այնուամենայնիվ, նույնը չի նկատվում հանցանքի պասիվ կողմի դեպքում, որի առնչությամբ Գնահատման զեկույցում (86-րդ և 87-րդ պարբերություններ) ընդգծված՝ ՔՕ-ի 311-րդ, 311<sup>1</sup>-րդ և 311<sup>2</sup>-րդ հոդվածներին վերաբերող բոլոր թերությունները չեն վերացվել: 311<sup>2</sup>-րդ հոդվածով սահմանված հանցանքը հիմնականում սահմանափակվում է «շահադիտական նպատակներով» կատարված գործողություններով և չի վերաբերում երրորդ կողմ հանդիսացող շահառուներին: Այդ բացերը մասամբ լրացվում են պասիվ կաշառակերության մասին 311-րդ և 311<sup>1</sup> հոդվածներով, որոնք տարածվում են նաև ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելու վրա: Այդ հոդվածները, այնուամենայնիվ, կիրառվում են միայն այն դեպքերում, երբ ազդեցության «առուծախով» զբաղվող անձը պաշտոնյա է կամ հանրային ծառայող: Բացի դրանից, 311-րդ, 311<sup>1</sup>-րդ և 311<sup>2</sup>-րդ հոդվածներով պահանջվում է ազդեցության փաստացի գործադրում (անկախ այն հանգամանքից, թե ազդեցության գործադրմամբ ձեռք է բերվել նախատեսված արդյունքը, թե ոչ): Այդ պատճառով՝ ԳՐԵԿՈ-ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին փոփոխություններ կատարել Օրենսգրքի համապատասխան հոդվածներում՝ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի հետ, որին առնչվող վերապահումը չեղյալ է համարվել, լիարժեք համապատասխանություն ապահովելու համար:

22. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ v առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

#### **Առաջարկություն vi.**

23. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է հանրային ծառայողների «պարզ» ակտիվ կաշառակերության*

*(Քրեական օրենսգրքի 312.1 հոդվածի 1-ին պարբերություն), «պարզ» ակտիվ առևտրային կաշառակերության (Քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին պարբերություն) և սպորտում կաշառակերության (Քրեական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերություն) համար պատժամիջոցները խստացնել՝ արդյունքում ապահովելով, որ այս հանցանքների համար օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետը երկարացվի:*

24. Իշխանությունները հղում են կատարում Քրեական օրենսգրքի վերոնշյալ փոփոխություններին, որոնք խստացրել են 312.1 հոդվածի 1-ին պարբերությամբ, 200-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և 201-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերություններով նախատեսված պատժամիջոցները: Արդյունքում, պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի պարզ ակտիվ կաշառակերությունը այժմ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով և որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Պարզ ակտիվ առևտրային կաշառակերությունը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Սպորտում կաշառակերության համար պատժամիջոցը ևս խստացվել է, այժմ տուգանքը նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով է, կամ պատիժ է սահմանվում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Այս խստացված պատժամիջոցների արդյունքում, սույն հանցանքների համար օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետը, ևս, երկու տարուց երկարաձգվել է մինչև հինգ տարի:

25. ԳՐԵԿՈ-ն ողջունում է այս օրենսդրական փոփոխությունները և առաջարկության մեջ նշված հանցանքների համար օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետի հետագա երկարաձգումը:

26. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ vi առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

#### **Առաջարկություն vii.**

27. ԳՐԵԿՈ-ն առաջարկել է՝ i) *վերլուծել Քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածը (4-րդ*



պարբերություն), 312<sup>1</sup>-րդ հոդվածը (4-րդ պարբերություն) և 200-րդ հոդվածը (5-րդ պարբերություն) և համապատասխանաբար վերանայել պատժից ավտոմատ (և պարտադիր ընդհանուր) ազատումը, որը շնորհվում է գործուն գղջալու դեպքում և ցանկացած դեպքում, ii) պարզաբանել այն պայմանները, որոնց ներքո գործուն գղջալու պաշտպանության միջոցը կարող է վկայակոչվել:

28. Իշխանությունները զեկուցում են, որ համաձայն սույն առաջարկության՝ Քրեական օրենսգրքի համապատասխան դրույթները փոփոխվել են, և բարելավվել է դրանց հետևողականությունը: Մասնավորապես, ՔՕ-ի<sup>3</sup> 200-րդ հոդվածը լրացվել է մի դրույթով, որով նախատեսվում է, որ առևտրային կաշառք տվող ցանկացած անձ ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում: Բոլոր համապատասխան հանցանքների կապակցությամբ ավելացվել են նոր դրույթներ, որոնցով քրեական պատասխանատվությունից ազատելու համար նախատեսվում է առավելագույնը երեք օր ժամկետ, որի ընթացքում կաշառք տվող անձը այդ մասին պետք է կամավոր հայտնի իրավապահ մարմիններին:
29. Իշխանություններն ավելացնում են, որ նույնիսկ երբ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, կաշառակերության գործը կքննվի դատարանի կողմից, որը կգնահատի այդ պատասխանատվությունից ազատման իրավական հիմքերը: Քրեական դատավարության օրենսգրքի 360<sup>1</sup> հոդվածի հիման վրա հնարավոր է նաև անուղղակի դատական վերանայում, որը դատարանին թույլ է տալիս լրացուցիչ որոշում կայացնել, երբ համապատասխան հիմքերը ցույց են տալիս, որ հանցագործն ապօրինաբար ազատվել է քրեական պատասխանատվությունից: Նման դեպքում այդ անձի դեմ քրեական հետապնդումը կվերսկսվի:
30. Ինչ վերաբերում է առաջարկության առաջին մասին, ԳՐԵԿՈ-ն նկատում է, որ 200-րդ, 312-րդ և 312<sup>1</sup>-րդ հոդվածների նոր շարադրանքով «գործուն գղջալու» պաշտպանության միջոցը դեռևս պարտադիր է և կիրառվում է ավտոմատ կերպով, ինչպես նշվում է «ազատվում է քրեական պատասխանատվությունից» արտահայտությամբ: ԳՐԵԿՈ-ն ընդունում է, որ գործուն գղջալու մասին դրույթի կիրառման պայմանները կարող են վերանայվել դատարանի կողմից: Սակայն, եթե դրանք իրականացվում են, կաշառք տվողն ավտոմատ կերպով ազատվում է քրեական պատասխանատվությունից՝ անկախ

<sup>3</sup> Քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը՝ փոփոխված. Առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին ոչ ուշ, քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին:

գործի փաստական հանգամանքներից: Այս կապակցությամբ ԳԲԿՈ-ն հիշեցնում է իր մտավախությունները, որոնք արտահայտել էր Գնահատման զեկույցում (90-րդ պարբերություն) և Հայաստանի իշխանություններին կոչ է անում վերանայել համապատասխան հանցանքների շարադրանքը: Ինչ վերաբերում է առաջարկության երկրորդ մասին, ԳԲԿՈ-ն ողջունում է, որ համապատասխան դրույթների շարադրանքը գոնե համապատասխանեցվել է, և որ գործուն գղջալու պաշտպանության միջոցը վկայակոչելու համար կարճ ժամկետ է սահմանվել, ինչը չարաշահումների դեմ որոշ երաշխիքներ է ապահովում:

31. ԳԲԿՈ-ն եզրակացնում է, որ vii առաջարկությունն իրականացվել է մասամբ:

**Առաջարկություն viii.**

32. *ԳԲԿՈ-ն առաջարկել է վերացնել արարքը երկուստեք հանցագործություն ճանաչելու պահանջը կաշառակերության և ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելու հանցանքների առնչությամբ, որոնք կատարվել են արտերկրում՝ Հայաստանի քաղաքացիների կողմից:*

33. Հայաստանի իշխանությունները նշում են, որ ՔՕ-ի 15(2) հոդվածով նախատեսված՝ արարքը երկուստեք հանցագործություն ճանաչելու կանոնից բացառությունների շրջանակն ընդլայնվել է Քրեական օրենսգրքի վերոնշյալ փոփոխությամբ՝ տարածվելով կաշառակերության և ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելու հանցանքների վրա, որոնք կատարվել են արտերկրում՝ Հայաստանի քաղաքացիների կողմից:

34. ԳԲԿՈ-ն նկատում է սույն առաջարկության համաձայն կատարված օրենսդրական փոփոխությունները և ողջունում է այն հանգամանքը, որ, արարքը երկուստեք հանցագործություն ճանաչելու պահանջը վերացվել է կաշառակերության և ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելու հանցանքների առնչությամբ՝ հղում կատարելով ՔՕ-ի 15-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նշված՝ արարքը երկուստեք հանցագործություն ճանաչելու կանոնից բացառությունների վերաբերյալ դրույթներին:

35. ԳԲԿՈ-ն եզրակացնում է, որ viii առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

**Թեմա II. Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը.**

36. Հարկ է նշել, որ ԳԲԿՈ-ն իր Գնահատման զեկույցում II թեմայի առնչությամբ

Հայաստանին ներկայացրել է 11 առաջարկություն: Այդ առաջարկությունների կատարման գործընթացը ներկայացվում է ստորև:

### **Առաջարկություն i.**

37. *ԳՆԵԿՈ-ն առաջարկել է միջոցներ ձեռնարկել՝ ընտրական քարոզչության ժամանակ մասնավոր անձանց կողմից կատարվող նվիրատվությունների և ծախսերի սահմանաչափերի մասին դրույթների՝ այդ նվիրատվությունները կամ ծախսերը քարոզչության ժամկետից դուրս կատարելու միջոցով շրջանցումը կանխելու համար:*
38. Հայաստանի իշխանությունները զեկուցում են, որ 2011 թվականի մայիսի 26-ին նոր Ընտրական օրենսգիրք է ընդունվել և ուժի մեջ է մտել 2011 թվականի մայիսի 26-ին: Օրենսգրքի 25-րդ հոդվածով սահմանվում է, որ կուսակցությունները և թեկնածուները պետք է բացեն նախընտրական հիմնադրամներ, որտեղ մուտքագրվում են քարոզչության բոլոր ռեսուրսները, և որտեղից կատարվում են քարոզչության բոլոր ծախսերը: 25-րդ հոդվածում սահմանվում է այն անձանց ցուցակը, որոնց թույլատրվում է մուծումներ կատարել նախընտրական հիմնադրամ, և սահմանվում են այդ մուծումների առավելագույն չափերը: Այդ սահմանաչափերը գերազանցող կամ ցանկում չնշված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից կատարված մուծումները փոխանցվում են պետական բյուջե այն բանկերի կողմից, որտեղ բացվել են նախընտրական հիմնադրամները: Մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը ձեռք բերված ապրանքները և ծառայությունները պետք է ներառվեն նաև հիմնադրամից կատարված ծախսերի հայտարարագրում՝ անկախ դրանց ձեռք բերման ամսաթվից:
39. Իշխանությունները նաև նշում են, որ «Կուսակցությունների մասին» օրենքում կատարված փոփոխություններն ընդունվել են 2012 թվականի փետրվարի 9-ին և ուժի մեջ են մտել 2012 թվականի մարտի 17-ին: Օրենքի 25-րդ հոդվածում կատարվել է փոփոխություն՝ ֆիզիկական անձանց կողմից կուսակցություններին տրվող նվիրատվությունների վերաբերյալ կանոններ, նաև՝ սահմանաչափեր համանման եղանակով սահմանելու համար<sup>4</sup>: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ ավելի մանրամասնորեն է մշակվում հաշվետվություն ներկայացնելու կարգը և ձևաչափը, և նախատեսվում է, ի թիվս այլ

<sup>4</sup> Կուսակցությունները կարող են ֆիզիկական անձանցից նվիրատվություններ ստանալ մինչև տարեկան նվազագույն աշխատավարձի միլիոնապատիկի չափով (1 միլիարդ ՀՀ դրամ կամ մոտ 2 միլիոն եվրո), ներառյալ յուրաքանչյուր ֆիզիկական անձի կամ առևտրային իրավաբանական անձի կողմից նվազագույն աշխատավարձի 10 000-ապատիկը (10 միլիոն ՀՀ դրամ կամ մոտ 2 000 եվրո) և յուրաքանչյուր ոչ առևտրային իրավաբանական անձի կողմից նվազագույն աշխատավարձի 1 000-ապատիկը (1 միլիոն ՀՀ դրամ կամ մոտ 2 000 եվրո):

պահանջների, որ նվիրատվությունների վերաբերյալ հաշվետվություններում նշվեն նվիրատուների անունը և հասցեն: Անդամակցության վճարների վերաբերյալ տվյալներում պետք է ներառվի նաև կուսակցության՝ անդամակցության վճարը վճարած անդամների ընդհանուր թիվը, որպեսզի ապահովվի, որ անդամակցության վճարները չօգտագործվեն կուսակցությանը գաղտնի նվիրատվություններ տալու նպատակով: Վերջապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը փոփոխող օրենքն ուժի մեջ է մտել նույն օրը, երբ ուժի մեջ են մտել «Կուսակցությունների մասին» օրենքի փոփոխությունները: Օրենսգիրքը լրացվել է 189<sup>6</sup> նոր հոդվածով, որով կուսակցությունները և կուսակցությունների պաշտոնյաների նկատմամբ սահմանվում է պատասխանատվություն՝ չթույլատրված կամ օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունները պետական բյուջե չփոխանցելու համար:

40. ԳՐԵԿՈ-ն հաշվի է առնում Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված օրենսդրական միջոցառումները: Այն մասնավորապես ողջունում է «Կուսակցությունների մասին» նոր օրենքում ֆիզիկական անձանց կողմից նվիրատվությունների նկատմամբ սահմանաչափերի և այն նորմերի ներմուծումը, որոնց համաձայն որոշակի գումարը գերազանցող նվիրատվությունները պետք է կատարվեն բանկային փոխանցման միջոցով, ինչով երաշխավորվում է նախընտրական քարոզարշավի վերաբերյալ կանոնների շրջանցման կանխումը: Ապահովության մյուս միջոցները ներառում են այն փաստը, որ նախընտրական հիմնադրամի ձևավորումից առաջ ձեռք բերված ապրանքները և ծառայությունները նույնպես պետք է հաշվետվության մեջ ներառվեն որպես քարոզչության ծախսեր, ինչպես նաև ներառում են կուսակցության՝ անդամակցության վճարները վճարած անդամների թվի մասին նշում՝ գաղտնի նվիրատվությունները անդամակցության վճար անվան տակ նվիրատվության կանոնների շրջանցումից խուսափելու համար: Ընդունելով հնարավոր խախտումները բացահայտելուն ուղղված դիտանցման արդյունավետ լինելու փաստը՝ ԳՐԵԿՈ-ն գոհունակություն է հայտնում այն կապակցությամբ, որ համապատասխան տեքստերում ներկայացված երաշխիքներն ընտրական քարոզարշավի ֆինանսավորման կանոնների շրջանցման դեմ ապահովության բավարար միջոցներ են:

41. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ i առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

#### **Առաջարկություն ii.**

42. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ապահովել, որ քաղաքական կուսակցություններին և թեկնածուներին կատարվող բնակթերային (ոչ դրամական) նվիրատվությունները (բացառությամբ ոչ*

*մասնագիտական ծառայություններ մատուցողների կողմից կատարվող կամավոր աշխատանքից), ինչպես նաև զեղչված գներով առաջարկված ապրանքները և ծառայությունները հաշվարկվեն իրենց առևտրային արժեքով և ներառվեն քարոզչության ֆինանսական միջոցների մասին հայտարարագրերում:*

43. Իշխանությունները ներկայացնում են, որ նոր Ընտրական օրենսգրքում պարզաբանվել է այն հարցը, որ միայն ընտրական հիմնադրամի միջոցները պետք է օգտագործվեն՝ համապատասխան հոդվածում<sup>5</sup> մանրամասն թվարկված գործողությունների միջոցով ընտրական քարոզարշավ անցկացնելու նպատակով: Ավելին, եթե ապրանքներն ու ծառայությունները մատուցվել են շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում:
44. Իշխանություններն ավելացնում են, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2012 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով պաշտոնական պարզաբանման մասին» որոշման մեջ նշել է, որ ապրանքները և ծառայությունները, որոնք ձեռք են բերվել անվճար, ևս ենթակա են հայտարարագրման և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վերահսկողության՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:
45. ԳԲԵԿՈ-ն նկատում է, որ Հայաստանի իշխանությունները միջոցներ են ձեռնարկել, որ զեղչված գներով ձեռք բերված ապրանքներն ու ծառայությունները իրենց շուկայական արժեքով ներառվեն նախընտրական հիմնադրամի ծախսերում: ԳԲԵԿՈ-ն նաև նկատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ տրված պարզաբանումը: Երկու միջոցներն էլ ուղղված են առաջարկության մեջ արտահայտված մտավախություններին: Այդուհանդերձ, ավելի հստակ կլիներ, եթե Ընտրական օրենսգրքի տեքստում բացահայտ հղում կատարվեր «բնամթերային (ոչ դրամական) նվիրատվություններին»: Թույլատրելի ապրանքների և ծառայությունների

---

<sup>5</sup> Ընտրական օրենսգրքի 26.2 հոդված. «Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար օգտագործում են միայն նախընտրական հիմնադրամի միջոցները: Այդ նպատակով նախընտրական հիմնադրամից կատարվող ծախսերի առավելագույն չափը սահմանվում է սույն օրենսգրքով:

Սույն մասում նկարագրված ապրանքներն ու ծառայությունները, եթե մատուցվել են շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում:»

«բաց» ցանկը, ևս, ավելի լավ կլիներ, քան սպառիչ ցանկը: ԳԲԵԿՈ–ն Հայաստանի իշխանություններին խրախուսում է Ընտրական օրենսգրքի փոփոխման ընթացիկ փուլում լուծել այդ երկիմաստությունների խնդիրը:

46. ԳԲԵԿՈ–ն եզրակացնում է, որ ii առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

**Առաջարկություն iii.**

47. *ԳԲԵԿՈ–ն առաջարկել է քաղաքական կուսակցությունների և ընտրական քարոզչությունների ֆինանսավորման համար երրորդ անձանց կողմից կատարված մուծումների թափանցիկությունը բարձրացնելու միջոցներ գտնել:*

48. Հայաստանի իշխանությունները շեշտում են, որ նոր ընդունված Ընտրական օրենսգիրքը բարձրացրել է երրորդ անձանց կողմից կատարվող մուծումների թափանցիկությունը՝ սպառիչ ցանկով թվարկելով, թե որ անձինք կամ մարմիններն իրավունք ունեն մուծում կատարել նախընտրական հիմնադրամներ և սահմանելով, որ քարոզչության ֆինանսավորման համար օգտագործում են միայն նախընտրական հիմնադրամի միջոցները: Դրանով նաև նախատեսվում է, որ այն բանկերը, որոնցում բացվել են ժամանակավոր հատուկ հաշիվներ, պետք է յուրաքանչյուր երեք օրը մեկ անգամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ–վերստուգիչ ծառայություն ներկայացնեն հաշվետվություն թեկնածուների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ ֆինանսական մուտքերի և ելքերի մասին: Իր հերթին, վերահսկիչ–վերստուգիչ ծառայությունը վերանայում է տվյալները, ամփոփ հաշվետվություն է պատրաստում և այն տեղադրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջում: Թեկնածուների, համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունների, և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջում:

49. Ինչ վերաբերում է ընտրական քարոզչության համատեքստից դուրս կուսակցությունների ֆինանսավորմանը, կուսակցությունների մասին օրենքի փոփոխություններով կարգավորվում են նվիրատվությունները՝ սպառիչ ցանկով թվարկելով այն անձանց կամ մարմինները, որոնք կարող են մուծումներ կատարել, յուրաքանչյուր անձի (մարմնի) և յուրաքանչյուր տարվա համար այդ մուծումների չափի վրա սահմանափակումներ դնելով և արգելելով անանուն նվիրատվությունները (25-րդ

հողված): Ամեն տարի մինչև մարտի 25-ը կուսակցությունները ներկայացնում և հրապարակում են նախորդ տարվա ընթացքում իրենց բոլոր եկամուտների, գույքի և ծախսերի ֆինանսական հաշվետվությունը: Այս հաշվետվությունը հրապարակվում է մամուլում և հասանելի է Հայաստանի Հանրապետության հանրային ծանուցումների պաշտոնական կայքէջում:

50. ԳՐԵԿՈ-ն ողջունում է նոր Ընտրական օրենսգրքի և «Կուսակցությունների մասին» օրենքի համապատասխան դրույթները, որոնցով նախատեսվում է, որ կուսակցություններին և թեկնածուներին կատարվող մուծումներն անցնեն համապատասխան հաշիվներով և համապատասխանաբար արձանագրվեն: Ուստի, առկա են միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս բարձրացնելու երրորդ անձանց կողմից կատարված մուծումների թափանցիկությունը և հավասար պայմաններ ապահովելու կուսակցությունների համար՝ ընդունելով, որ այս դրույթների կիրարկման դիտանցումն արդյունավետ է եղել:

51. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ *iii առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:*

#### **Առաջարկություն iv.**

52. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ճշգրտել նախընտրական քարոզչության համար սահմանված միջոցների առկա սահմանաչափերը՝ քաղաքական կուսակցություններին և թեկնածուներին խրախուսելով ներկայացնել նախընտրական քարոզչության համար իրականում կատարված ծախսերը:*

53. Իշխանությունները զեկուցում են, որ Ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածները փոփոխվել են՝ նպատակ ունենալով բարձրացնել ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների կողմից նախընտրական քարոզչության նպատակով ծախսված գումարների սահմանաչափերը: Նախագահական ընտրությունների թեկնածուների և համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար համապատասխանաբար 70 և 60 միլիոն դրամը բարձրացվել է 100 միլիոն դրամի (մոտ 190 000 եվրո): Ազգային ժողովի ընտրություններին մեծամասնական ընտրակարգով մասնակցող թեկնածուների համար 5 միլիոն դրամի սահմանաչափը բարձրացվել է 10 միլիոն դրամի (մոտ 19 000 եվրո): Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար սահմանաչափերը բարձրացվել են՝ ըստ ընտրության կայացման համայնքում քվեարկողների թվի: Երևան քաղաքի ավագանու համար 60

միլիոն դրամ սահմանաչափը բարձրացվել է 75 միլիոն դրամի (մոտ 143 000 եվրո):

54. ԳՐԵԿՈ-ն նկատում է ծախսերի սահմանաչափերը, որոնք բարձրացվել են Հայաստանի իշխանությունների կողմից, և որոնք մեղմացնում են ծախսերի չափազանց ցածր սահմանաչափերը, որոնց մասին նշվել էր Գնահատման զեկույցում:

55. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ iv առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

#### **Առաջարկություն v.**

56. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է սահմանել միասնական ձևաչափ (անհրաժեշտության դեպքում, դրանց կցել համապատասխան ուղեցույցներ) ընտրական քարոզչության հետ կապված ծախսերի վերաբերյալ հաշվետվություն պատրաստելու և ներկայացնելու համար:*

57. Հայաստանի իշխանությունները նշում են, որ համաձայն այս առաջարկության՝ Ընտրական հանձնաժողովը 2012 թվականի փետրվարի 16-ին ընդունել է «Նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և հիմնադրամից կատարվող ծախսերի հաշվառման կարգը, հայտարարագրի ձևը սահմանելու մասին» որոշումը, որով Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող թեկնածուները, ինչպես նաև համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները, պետք է նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրեր ներկայացնեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը: Այդ հայտարարագրերը պետք է ներկայացվեն նախընտրական քարոզչության մեկնարկից հետո 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ոչ ուշ, քան Ընտրական օրենսգրքով սահմանված վերջնաժամկետից 3 օր առաջ: Որոշմանը կցված են հայտարարագրերի լրացման և ներկայացման ընթացակարգի, պայմանների և վերջնաժամկետների վերաբերյալ ուղեցույցները: Որոշման էլեկտրոնային տարբերակը կարելի է գտնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջում ([www.elections.am](http://www.elections.am)):

58. ԳՐԵԿՈ-ն ողջունում է Ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումը, որով ընդհանուր հաշվետվության ձևաչափ է սահմանվում և թվարկվում են այն ծախսերի կատեգորիաները, որոնք պետք է արձանագրվեն: Կախված այն բանից, թե ինչպես այդ ձևաչափը կօգտագործվի կուսակցությունների և թեկնածուների կողմից՝ այն պետք է ներկայացված տվյալների իմաստալից համեմատության հնարավորություն տա: ԳՐԵԿՈ-ն նաև նկատում է որոշմանը կցված ուղեցույցները, որոնք



կուսակցություններին և ընտրություններին մասնակցող թեկնածուներին որոշակի ուղղություն են տալիս հաշվետվության պահանջների շրջանակի վերաբերյալ: Այդուհանդերձ, հետաքրքիր է, թե արդյո՞ք այս ուղեցույցները բավականին մանրամասն են՝ իրենց բավարար տեղեկություն տրամադրելու համար: Ուստի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող է ունենալ այդ խնդիրն իր ուշադրության կենտրոնում պահելու ցանկություն, որպեսզի, անհրաժեշտության դեպքում, լրացնի ուղեցույցները:

59. ԳՐԵԿՈ–ն եզրակացնում է, որ v առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

**Առաջարկություն vi.**

60. *ԳՐԵԿՈ–ն առաջարկել էր ապահովել, որ մեծամասնական ընտրակարգով ընտրվող Ազգային ժողովի պատգամավորական թեկնածուների, համայնքի ղեկավարների թեկնածուների և Երևան քաղաքի ավագանու թեկնածուների ֆինանսական հայտարարագրերը հրատարակվեն այնպես, որ դրանք կերպով մատչելի լինեն հանրության համար:*

61. Իշխանությունները նշում են, որ Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ թեկնածուները (նաև կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները) իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների, ինչպես նաև նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին արված ծախսերի վերաբերյալ հայտարարագրերը եռօրյա ժամկետում ներկայացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն: Այդ հայտարարագրերը տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջում: Հաշվի առնելով, որ 27-րդ հոդվածում ներառված է այս դրույթը և ընդգրկված է Օրենսգրքի «Հիմնական դրույթներ» մասում, այն, հետևաբար, կիրառվում է բոլոր ընտրությունների համար: Ուստի, թեկնածուների սահմանումը ներառում է Հանրապետության նախագահի թեկնածուներին, մեծամասնական ընտրակարգով ընտրվող Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներին, համայնքի ղեկավարի թեկնածուներին և Երևան քաղաքի ավագանու թեկնածուներին:

62. ԳՐԵԿՈ–ն նկատում է տրամադրված տեղեկությունը, որը թերևս ցույց է տալիս, որ հեշտացվել է ֆինանսական հայտարարագրերի հասանելիությունը հանրության համար:

63. ԳՐԵԿՈ–ն եզրակացնում է, որ vi առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

**Առաջարկություն vii.**

64. *ԳՐԵԿՈՆ առաջարկել է ապահովել անկախ և հետևողական աուդիտի անցկացում բյուջետային ֆինանսավորում ստացող կուսակցությունների, անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ կուսակցությունների մոտ:*
65. *Հայաստանի իշխանությունները զեկուցում են, որ «Կուսակցությունների մասին» օրենքը լրացվել է նոր՝ 28.1 հոդվածով, որով նախատեսվում է, որ այն կուսակցությունները, որոնց ակտիվների արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնազարապատիկը (մոտ 20 000 եվրո), ինչպես նաև պետությունից ֆինանսավորում ստացած կուսակցությունները պարտավոր են հաշվետվությունները հրապարակել աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ միասին: Աուդիտի կողմից կատարման ենթակա պայմանները սահմանված են ՀՀ «Աուդիտորական գործունեության մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի օրենքով: Սույն օրենքով մասնավորապես սահմանվում է, որ աուդիտի ստանդարտները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ միջազգային աուդիտի ստանդարտների հիման վրա, և որ աուդիտորական կազմակերպությունը պետք է իր ցանցի գործելակերպն ինքնուրույն ընտրի: Այն նաև դրույթներ է պարունակում աուդիտորների հավաստագրման վերաբերյալ, որոնք ապահովում են դրանց անկախությունը կուսակցություններից:*
66. *ԳՐԵԿՈՆ նկատում է ստացված տեղեկությունները, որոնցում թերևս նշվում է, որ պետական ֆինանսավորում ստացած կուսակցությունների, ինչպես նաև 20 000 եվրոն գերազանցող ակտիվներ ունեցող կուսակցությունների հաշիվները ենթակա են պարտադիր աուդիտի: Այն նաև նկատում է «Աուդիտորական գործունեության մասին» օրենքով տրվող երաշխիքները: Սակայն իշխանությունները կարող են ցանկանալ լրացնել այս ընդհանուր տեքստը՝ հատկապես կուսակցությունների աուդիտին ուղղված կանոնակարգերով:*
67. *ԳՐԵԿՈՆ եզրակացնում է, որ vii առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:*

**Առաջարկություն viii.**

68. *ԳՐԵԿՈՆն առաջարկել է ապահովել քաղաքական կուսակցությունների և նախընտրական քարոզչությունների ֆինանսավորման դիտանցման համար անկախ և միասնական մեխանիզմ, որին կտրվեն իրավասություն, լիազորություն, ինչպես նաև ֆինանսական և կադրային ռեսուրսներ՝ այդ ֆինանսավորումն արդյունավետորեն և ակտիվորեն վերահսկելու, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման կանոնակարգերի ենթադրյալ*

*իրավախախտումների գործերով քննություն իրականացնելու և, անհրաժեշտության դեպքում, պատժամիջոցներ կիրառելու համար:*

69. Իշխանությունները նշում են, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ ստեղծվել է Վերահսկիչ-վերստուգիչ մշտական ծառայություն՝ համաձայն Ընտրական օրենսգրքի և «Կուսակցությունների մասին» օրենքի փոփոխված դրույթների: Ծառայությունը, որը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մաս չի կազմում, բաղկացած է ղեկավարից և երկու քաղաքացիական ծառայողներից, իսկ ընտրությունների ժամանակ, անհրաժեշտության դեպքում, կարող է մեկ ամիս ժամկետով վարձել առավելագույնը հինգ պայմանագրային աշխատող: Բացի դրանից, նախընտրական քարոզչությունների ընթացքում Ազգային ժողովից յուրաքանչյուր խորհրդարանական խումբ նշանակում է մեկ որակավորված աուդիտոր, ով կամավոր հիմունքներով աջակցում է ծառայությանը մինչև ընտրությունների արդյունքների հրապարակման հինգերորդ օրը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, ինչպես նաև վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարը, չեն կարող քաղաքական կուսակցության անդամներ լինել: Ծառայության կողմից աշխատանքի ընդունված մյուս քաղաքացիական ծառայողները ենթարկվում են քաղաքական սահմանափակման սկզբունքին, ինչը նշանակում է, որ նրանք չեն կարող իրենց դիրքն օգտագործել քաղաքական կուսակցությունների շահերի համար:
70. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության խնդիրն է կուսակցությունների և թեկնածուների կողմից ներկայացվող ֆինանսական հայտարարագրերը ստանալուց հետո երկու օրվա ընթացքում ստուգված հայտարարագրերի վերաբերյալ կազմել հաշվետվություն և ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանը: Հանձնաժողովի կողմից հաշվետվության քննարկումից հետո այն տեղադրվում է Հանձնաժողովի կայքէջում: Ծառայությունը նաև բանկից հաշվետվություններ է ստանում կուսակցությունների և թեկնածուների նախընտրական հիմնադրամներում եկամուտների և ծախսերի վերաբերյալ: Այս տվյալները համեմատվում են կուսակցությունների և թեկնածուների ներկայացրած հայտարարագրերի հետ: Այն նաև ընդգրկվում է հակիրճ հաշվետվության մեջ, որը տեղադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջում:
71. Իշխանությունները նաև զեկուցում են, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգիրքը լրացվել է 223<sup>2</sup> նոր հոդվածով՝ կուսակցությունների ֆինանսավորման մասին կարգավորիչ դրույթների ենթադրյալ իրավախախտումների

գործերով քննությունն ապահովելու և, անհրաժեշտության դեպքում, պատժամիջոցներ կիրառելու համար<sup>6</sup>: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ունի վարչական իրավախախտումների գործերով քննություն իրականացնելու լիազորություն և կարող է պատժամիջոցներ կիրառել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության կողմից ստացված և ծախսված ֆինանսական միջոցների մասին հաշվետվություն չհրապարակելու և չներկայացնելու դեպքերում: Անհրաժեշտ փաստաթղթերը լիազորված պետական մարմին չներկայացնելու դեպքում իրավասու մարմինը կուսակցության ղեկավարների նկատմամբ կիրառում է տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի ութունապատիկից հարյուրապատիկի չափով<sup>7</sup>:

72. ԳՐԵԿՈ-ն հաշվի է առնում տրամադրված այն տեղեկությունը, որում նշվում է, որ Հայաստանի իշխանությունները մի շարք միջոցներ են ձեռնարկել այդ առաջարկության իրականացման ուղղությամբ: Հստակ բարելավում է համարվում համալիր եղանակով կուսակցությունների և նախընտրական քարոզչությունների ֆինանսավորումը վերանայելու իրավասություն ունեցող և որպես մշտական մարմին գործող վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գոյության փաստը: Մյուս դրական միջոցառումները ներառում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նոր՝ անկուսակցական կառուցվածքը, վերահսկիչ-վերստուգիչ ծառայության անդամների՝ կուսակցություններից անկախ լինելու հանգամանքի ապահովումը, ինչպես նաև այն փաստը, որ ծառայության անձնակազմային ռեսուրսներն էապես մեծացվել են, և որ այժմ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կարող են վարչական պատժամիջոցներ կիրառվել:

73. ԳՐԵԿՈ-ն, այնուամենայնիվ, կարծիք է արտահայտում, որ ձեռնարկված միջոցառումներն ամբողջությամբ չեն անդրադառնում այն բոլոր թերություններին, որոնք դիտանցմանը վերաբերող հարցերի կապակցությամբ ընդգծված են եղել Գնահատման զեկույցում (71-րդ պարբերություն): Մասնավորապես, ԳՐԵԿՈ-ն կասկածներ ունի այն փաստի կապակցությամբ, որ աշխատանքի մի մասն իրականացնում են կուսակցությունների կողմից նշանակված աուդիտորներ, և չկա որևէ դրույթ, որով կերաշխավորվի, որ աուդիտորը չի վերանայի իրեն նշանակած

<sup>6</sup> Պահանջված փաստաթղթերի չներկայացման կամ չհրապարակման դեպքում կարող է առաջացնել հանձնաժողովի կողմից տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով (մոտ 160-ից 200 եվրո):

<sup>7</sup> 189<sup>13</sup>, 189<sup>14</sup> և 189<sup>15</sup> հոդվածներ

կուսակցության կողմից ներկայացված հաշիվները: Ավելին, վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից վերանայում իրականացնելու համար նախատեսված ժամկետը թերևս նույնպես ցույց է տալիս, որ այդպիսի վերանայումը չի կարող, ինչպես հարկն է, լինել մանրակրկիտ. դժվար թե երկու օրը բավարար ժամկետ լինի, որպեսզի ծառայությունը կատարի ավելին, քան կուսակցությունների կողմից ներկայացված փաստաթղթերի պարզապես հպանցիկ ստուգումն է, նույնիսկ եթե այս աշխատանքների մի մասը կարելի է նախապես կատարել՝ ստուգելով բանկերի կողմից ներկայացված նախընտրական հիմնադրամների վերաբերյալ հաշվետվությունները: ԳՐԵԿՈ-ն գտնում է, որ վերահսկման համակարգը այնպես է կառուցված, որ ապահովի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ քաղաքական ֆինանսավորման վերաբերյալ տեղեկության արագ տրամադրումը, ինչն արժեքավոր նպատակ է: Այդուհանդերձ, հետաքննության իրավասություններից օգտվելու միջոցով հնարավոր խախտումները բացահայտելու նպատակով հաշիվների և հայտարարագրերի մանրակրկիտ դիտանցումն ավելի շատ ժամանակ է պահանջում: Ուստի, քաղաքական ֆինանսավորման թե արագ, թե մանրակրկիտ վերահսկման նպատակները պետք է պատշաճ կերպով հավասարակշռվեն: ԳՐԵԿՈ-ի կողմից կոչ է արվում Հայաստանի իշխանություններին շարունակել իրենց ջանքերը առաջարկության մեջ արտահայտված անհանգստություններն ամբողջությամբ վերացնելու ուղղությամբ, քանի որ քաղաքական ֆինանսավորման արդյունավետ դիտանցումը չափազանց էական նշանակություն ունի համընդհանուր թափանցիկության և համակարգի արդյունավետության հարցում:

74. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ viii առաջարկությունն իրականացվել է մասամբ:

#### **Առաջարկություն ix.**

75. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ապահովել քաղաքական կուսակցությունների և նախընտրական քարոզչությունների ֆինանսավորման վերահսկողության արդյունքների հրապարակումը և հանրամատչելի լինելը:*

76. Հայաստանի իշխանությունները նշում են, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից քննարկվելուց հետո վերահսկիչ-վերստուգիչ ծառայության հաշվետվությունը տեղադրվում է Հանձնաժողովի կայքէջում (Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 6-րդ պարբերություն):

77. ԳՐԵԿՈ-ն ողջունում է տրամադրված այն տեղեկությունը, որով ցույց է տրվում, որ

առաջարկության նպատակն իրականացվել է:

78. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ ix առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

### **Առաջարկություն x.**

79. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է հստակ սահմանել քաղաքական ֆինանսավորման կանոնների խախտումները և ներմուծել այս իրավախախտումների համար արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ, մասնավորապես՝ ընդլայնելով գործող տուգանքների շրջանակը և պատժամիջոցներ սահմանող դրույթների շրջանակը և ընդգրկելով բոլոր անձանց/ընկերություններին, որոնց առնչությամբ «Կուսակցությունների մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանվում են պարտավորություններ:*

80. Իշխանությունները զեկուցում են, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը փոփոխվել է՝ պարզաբանելով ֆինանսավորման կանոնների խախտումները և խախտումների դեպքում կիրառելի պատժամիջոցները: Այժմ 189.13-ից 189.16 հոդվածներով սահմանում են վարչական պատասխանատվությունը և փուլ առ փուլ տուգանքները, եթե կուսակցության պաշտոնատար անձը հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին պետական լիազոր մարմին հաշվետվություն չի ներկայացրել կամ դա չի հրապարակել, օրենքով սահմանված փաստաթղթերը պետական լիազոր մարմին չի տրամադրել, կուսակցությանը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի դրամական հատկացումները անկանխիկ չի կատարել, և եթե կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե չի փոխանցել: Պատժամիջոցներ են նախատեսվում նաև այն նվիրատուների համար, ովքեր այդպիսի չթույլատրված նվիրատվություններ են կատարում:

81. ԳՐԵԿՈ-ն հաշվի է առնում օրենսդրական փոփոխությունները, որոնք անդրադառնում են առաջարկության մտավախություններին: Այն ողջունում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքում ավելի համաչափ և փուլ առ փուլ տուգանքների առկայությունը՝ կուսակցության պաշտոնատար անձանց և նվիրատուներին վերաբերող հստակ սահմանված իրավախախտումների համար: Այդուհանդերձ, կարող է պարզվել, որ այս պատժամիջոցները կիրառելի չեն կուսակցությունների նկատմամբ: Սակայն ԳՐԵԿՈ-ն ընդունում է, որ

կուսակցությունների համար կիրառելի են այլ քրեական պատժամիջոցներ, ինչպես նշված էր Գնահատման զեկույցում (73-րդ պարբերություն): Ուստի, այն գտնում է, որ Հայաստանի իշխանությունները հստակ սահմանել են քաղաքական ֆինանսավորման կանոնների խախտումները և այդ խախտումների վրա տարածվող հավելյալ պատժամիջոցներ են սահմանել, ինչպես պահանջվում էր առաջարկությամբ: Այդուհանդերձ, ԳՐԵԿՈ-ն իշխանություններին խրախուսում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի ընթացիկ բարեփոխման գործընթացում կոնկրետ կուսակցությունների համար կիրառելի պատժամիջոցներ ավելացնեն, որպեսզի ապահովեն, որ կուսակցությունները նույնպես պատասխանատվություն կրեն այն խախտումների համար, որոնք վերջերս ներառվել են Օրենսգրքում:

82. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ x առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:

#### **Առաջարկություն xi.**

83. *ԳՐԵԿՈ-ի կողմից առաջարկվում է «Կուսակցությունների մասին» օրենքի և Ընտրական օրենսգրքի վարչական իրավախախտումների դեպքում երկարաձգել վաղեմության ժամկետը:*

84. Իշխանությունները պարզաբանում են, որ Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխան հոդվածում կատարվել են այնպիսի փոփոխություններ, որ քաղաքական ֆինանսավորմանն առնչվող իրավախախտումների համար վարչական պատասխանատվության միջոցներ կարող են կիրառվել «իրավախախտումը հայտնաբերվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի»: Կատարվելուց ավելի քան մեկ տարի անց իրավախախտումը հայտնաբերելու դեպքում Օրենսգրքի 37(4) հոդվածով նախատեսվում է, որ «եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում»:

85. ԳՐԵԿՈ-ի կողմից հաշվի են առնվում «Կուսակցությունների մասին» օրենքի և Ընտրական օրենսգրքի վարչական իրավախախտումների դեպքում տրամադրված տեղեկությունները և վաղեմության ժամկետի երկարաձգումը: Նշվում է, այնուամենայնիվ, որ պարբերաբար արտահայտվել է այն կարծիքը, որ մեկ տարին բավարար չէ քաղաքական ֆինանսավորման բոլոր իրավախախտումների

բարդությունը հաշվի առնելու համար, հատկապես, եթե վերահսկողությունը ենթակա է կատարելագործման, ինչպես պահանջվում է viii առաջարկությամբ: Ավելին, ԳՐԵԿՈ-ն նկատում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37(4) հոդվածով առաջարկված լրացուցիչ հնարավորությունը, սակայն գտնում է, որ այդ հոդվածը բավարար ճկունություն չի ապահովում, որպեսզի հաշվի առնվեն բոլոր հնարավոր իրավիճակները: Եթե կատարվելուց ավելի քան մեկ տարի անց ոչ թե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, այլ լրատվամիջոցների կամ, օրինակ՝ մեկ այլ կուսակցության կողմից իրավախախտում է հայտնաբերվում, ապա կասկածելի է, թե արդյոք Հանձնաժողովը համապատասխան հսկողություն կիրականացնի կամ կարող է իրականացնել, որպեսզի կարողանա տուգանք սահմանել:

86. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ xi առաջարկությունն իրականացվել է մասամբ:

### **III. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

87. **Համաձայն վերոնշյալի՝ ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ երրորդ փուլի Գնահատման զեկույցում Հայաստանը տասնինն առաջարկություններից տասնվեցն իրականացրել է բավարար չափով:** Ինչ վերաբերում է I թեմային՝ մեղադրանքներ, i-vi առաջարկությունները և viii առաջարկությունն իրականացվել են բավարար չափով, իսկ vii առաջարկությունն իրականացվել է մասամբ: Ինչ վերաբերում է II թեմային՝ կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն, i-vii, ix և x առաջարկություններն իրականացվել են բավարար չափով, իսկ viii ու xi առաջարկություններն իրականացվել են մասամբ:

88. Ինչ վերաբերում է մեղադրանքներին, ԳՐԵԿՈ-ն ողջունում է Հայաստանի լուրջ ջանքերը, որոնք ներդրվել են՝ արդեն այս փուլում գրեթե բոլոր առաջարկությունները կատարելու համար: Քրեական օրենսգիրքն էապես փոփոխվել է, որպեսզի լուծում տրվի Գնահատման զեկույցում ընդգծված երկիմաստությունների մեծ մասին: ԳՐԵԿՈ-ն նաև ողջունում է ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելու նոր մեղադրանքը և Հայաստանի կողմից Քրեական իրավունքի կոնվենցիայի 12-րդ հոդվածին առնչվող վերապահման հետագա վերացումը, ինչպես նաև այն ընդգրկուն վերապատրաստման ծրագիրը, որն իրականացվել է, որպեսզի պարզաբանվի կաշառակերության հետ կապված որոշ հանցանքների ընկալման ձևը: ԳՐԵԿՈ-ն Հայաստանի իշխանություններին կոչ է անում շարունակել փոփոխել ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելու և գործուն գղջալու հատուկ պաշտպանության վերաբերյալ դրույթները՝ իր առաջարկությունները լիարժեք



կատարելու նպատակով:

89. Ինչ վերաբերում է կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության հարցին, Հայաստանը նաև էական բարեփոխումներ է ձեռնարկել՝ անդրադառնալով առաջարկություններում բարձրացված մտավախությունների մեծ մասին: «Կուսակցությունների մասին» օրենքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններին համապատասխան՝ ընդունվել է նոր Ընտրական օրենսգիրք: Թափանցիկությունն ու հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացնելը բարելավվել են թե՛ կուսակցությունների, թե՛ ընտրական քարոզչության ֆինանսավորման համատեքստում: Միջոցառումներ են ձեռնարկվել նվիրատվությունների առնչությամբ՝ քարոզչության ֆինանսավորման կանոնների շրջանցումից խուսափելու համար, վերանայվել են ծախսերի սահմանաչափերը, որպեսզի կուսակցություններին և թեկնածուներին խրախուսեն իրենց ծախսերի վերաբերյալ ավելի ճշգրիտ հաշվետվություններ ներկայացնել, ինչպես նաև սահմանվել են հաշվետվության ընդհանուր ձևաչափեր: Ինչ-որ չափով ուժեղացվել է նաև վերահսկողությունը՝ առավել մեծ կուսակցությունների համար պարտադիր աուդիտի ներդրմամբ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին կից մշտական վերահսկիչ-վերստուգիչ ծառայության հիմնադրմամբ, ինչպես նաև նրանց՝ քաղաքական կուսակցություններից անկախության ամրապնդմամբ: Սակայն, հավելյալ գործողություններ են հարկավոր, որպեսզի վերահսկողությունն ավելի արդյունավետ դառնա: Պատժամիջոցների զինանոցը նույնպես լրացվել է, և ընդլայնվել է կուսակցությունների ֆինանսավորման վարչական իրավախախտումների համար սահմանափակումների դրույթը, չնայած՝ այստեղ ևս պետք է հետագա միջոցներ ձեռնարկվեն՝ առաջարկության ամբողջական կատարման համար:
90. 87–89–րդ պարբերություններում նշվածի ներքո՝ ԳԲԵԿՈ–ն ողջունում է գնահատման երկու թեմաների առնչությամբ Հայաստանի կողմից կատարված էական բարեփոխումները, որոնք ցույց են տալիս, որ արդեն այս փուլում Հայաստանը կատարել է երրորդ փուլի Գնահատման զեկույցում նշված առաջարկությունների ավելին, քան չորս հինգերորդը: Այն Հայաստանին խրախուսում է շարունակել այս բարեփոխումները՝ քննարկման փուլում գտնվող առաջարկությունները հաջորդ 18 ամիսների ընթացքում կատարելու համար: ԳԲԵԿՈ–ն Հայաստանի պատվիրակության ղեկավարին առաջարկում է vi առաջարկության (I թեմա. մեղադրանքներ), և viii և xi առաջարկությունների (II թեմա. կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ տրամադրել ամենաուշը

մինչև 2014 թվականի հունիսի 30-ը:

91. Վերջապես, ԳՐԵԿՈ-ն Հայաստանի իշխանություններին առաջարկում է զեկույցը թարգմանել ազգային լեզվով և այդ թարգմանությունը հանրության համար հասանելի դարձնել: